

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ԽՈՐՀՈՒՐԴ.—Խորհուրդ է կոչվում այն արարողությունը, որի արտաքին (տեսանելի, շոշափելի) ձևի, բովանդակության մեջ չենք տեսնում կամ զգում, բայց հավատում ենք, որ կա աստվածային մի երևույթ, որ է՝ Աստուծո ներգործությունը, Ս. Հոգու միջոցով, տվյալ արարողության պահին: Այլ խոսքով, խորհուրդը անտեսանելիի տեսանելի արտահայտությունն է արտաքին ձևի, արարողության միջոցով:

Խորհրդակատարությամբ գերբնականը, աստվածայինը բնական, տեսանելի իրողության միջոցով հասկանալի է դառնում մարդուն: Այսպիսով հավատացյալի մտքի մեջ հասկանալի և ըմբռնելի են դառնում նյութականը՝ հոգևորին, ժամանակը՝ հավերժին, անհասանելին՝ հասանելիին գաղափարները:

Խորհրդի հասկացողությունն ու ըմբռնումը զուտ քրիստոնեական է, քանզի մինչ քրիստոնեություն չի եղել նույնիսկ այս հասկացողությունը, իսկ հրեաների մոտ կատարվող նույնօրինակ արարողությունները նշան էին կոչվում, ինչպես օրինակ՝ թլպատությունը, որը նշան էր նրանց (Եհովա Աստծուն պաշտողներին) զանազանելու հեթանոսներից. «Նշանակ առ զթլպատութիւնն, կնիք արդարութեան հաւատոցն» (Հռոմ. Դ 11):

Հին Կտակարանի բոլոր արարողությունները միայն նշան էին կոչվում, քանի որ նրանց մեջ չկար քրիստոսապարգև արբարար շնորհքները, ինչ-որ հիմքն է հանդիսանում քրիստոնեական խորհրդակատարման ժամանակ, քանզի նշանները ներքին արբարար զորություն չունեին և այդ իսկ պատճառով հոգու փրկության շնորհքներ չէին կարող պարգևել, մեղքից ազատելու և արդարացնելու զորություն չունեին, հավիտենական կյանք չէին կարող պարգևել, և որ շատ կարևոր է, Հոր Աստուծո որդեգիրը չէին կարող դարձնել: Այլ նրանք միայն նշաններ էին զանազանության համար, ինչպես պատկերը նշանն է մարդու, բայց մարդը չէ, կամ ինչպես արշալույսը կամ մայրամուտը, որոնք նշան են արևի ծագելու կամ մթնելու, բայց նրանք արև չեն և չունեն արևի ուժն ու զորությունը:

Ինչպես արդեն շեշտեցինք, խորհուրդ բառը կրոնական իմաստով նշանակում է անտեսանելի երևույթների հայտնությունը տեսանելի ծեսերի, աղոթքների կատարումով և հավատքի ընթացքով: Խորհուրդների ընդունելու և հասկանալու միակ ճանապարհը հավատքն է:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում, ինչպես նաև բոլոր քրիստոնեական ուղղափառ Եկեղեցիներում խորհուրդները յոթն են:

1. Մկրտություն.
2. Դրոշմ.
3. Ապաշխարություն.
4. Հաղորդություն.
5. Պսակ կամ Ամուսնություն.
6. Կարգ քահանայության կամ Ձեռնադրություն.
7. Կարգ հիվանդաց կամ Վերջին օծում:

Խորհուրդների ընթացքը

Խորհուրդ ընթանալու հիմնական, միակ միջոցը հավատքն է: Պետք է հավատանք արտաքին ծեսի խորքում կատարվող անտեսանելի իրողությանը: Փորձենք ներկայացնել վերոհիշյալ յուրաքանչյուր խորհրդակատարությանց մեջ եղած խորհուրդը:

1. Մկրտության խորհուրդը կայանում է նրանում, որ մկրտվելով երեխան քրիստոնյա է դառնում, ազատվում ադամական կամ նախնական մեղքից, և անդամագրվում եկեղեցուն, որպես եկեղեցու արգանդից ծնված զավակ:

2. Դրոշմի խորհրդով երեխան ընդունում է Սուրբ Հոգու շնորհները:

3. Ապաշխարության խորհրդով խոստովանողը, որը նախ գիտակցում է իր մեղքը, խոստովանում է բարձրաձայն և երդվում, որ այլևս չի մեղանչի, թողություն է ստանում:

4. Հաղորդության խորհուրդը հացի ու գինու փոխակերպումն է Քրիստոսի Մարմնին և Արյան, հավատացյալի սիրո միությունն է Տիրոջ հետ:

5. Պսակ կամ ամուսնության խորհուրդը այր և կնոջ սիրով միավորությունն է և մի ամբողջական էություն կազմելու հանգամանքը:

6. Կարգ քահանայության կամ ձեռնադրություն, ձեռնադրվող կամ օծվող անձը ստանում է Սուրբ Հոգու գերագույն շնորհները, դառնում Քրիստոսի եկեղեցու պաշտոնյա և Քրիստոսի ներկայացուցիչը երկրի վրա:

7. Կարգ հիվանդաց կամ վերջին օծում, հիվանդի հոգեկան և ֆիզիկական վերջին մաքրությունն է մեղքերից. հաղորդության Սուրբ խորհրդի միջոցով, կամ օծման ճանապարհով (Վերջինս վերապահված է Հոգևորականին):

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Մկրտության խորհուրդը հաստատված է Քրիստոսի կողմից: Խորհրդակատարությամբ մարդը ազատվում է ադամական կամ նախնական մեղքից և վերածնվելով անդամագրվում է քրիստոնեական եկեղեցուն ու դառնում նրա լիիրավ անդամն ու ժառանգորդը:

Հիսուս իր մկրտությամբ Հովհաննես Մկրտչի կողմից, հաստատեց այս խորհուրդը (Մատթ. Գ 13—17), (Մարկ. Ա 9—11), (Ղուկ. Գ 2—22, Դ 1): Եվ ապա պատվիրեց իր աշակերտներին՝ ասելով «Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» (Մատթ. ԻԸ 19):

Հիսուս մկրտությունը պայման հանարեց Աստուծո որդին ու ժառանգորդը, նրա թագավորության անդամն ու հավիտենական կյանքի մասնակիցը լինելու համար «Առանց Սուրբ Հոգով մկրտվելու և վերածնվելու չեք կարող Աստուծո արքայության մեջ մտնել (Հովհ. Գ 5):

Քրիստոնեական ընդհանուր Եկեղեցին մկրտության համար իբրև նյութ ընտրել է ջուրը, որով մկրտվեց Քրիստոս, բայց մկրտության ձևերն ու եղանակները այսօր տարբեր են.

Հեղմամբ (ջուրը վրան լցնելով).

Սրսկմամբ (ջուրը ցանելով, սրսկելով).

Ընկղմամբ (ընկղմելով ջրի մեջ, թաղելով ջրում):

Հայաստանյայց Եկեղեցին որդեգրել է երրորդ ձևը՝ ընկղմամբ, ճիշտ այդ ձևով էին մկրտում առաքյալները. «Թաղեալք ընդ նմին (Հիսուսի) ի մկրտութեանն, որով և ընդ նմին յարեայք հաւատովք Աստուծոյ ազդեցութեանն» (Պողոսի առ Կողոկս. Դ 12):

Երախան (երախա է կոչվում չմկրտվածը) Հայաստանյայց Եկեղեցում մկրտվում է Սուրբ Երրորդության անունով, ինչպես պատգամել է Հիսուս: Եվ այսօր մկրտության բանաձևը հետևյալն է. «(Այս անուն)... ծառայ Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն, մկրտի յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութենէ մեղաց, ընդունի զորդեգրութիւն Հօրն երկնաւորի, լինել ժառանգակից Քրիստոսի և Տաճար Հոգւոյն Սրբոյ» (Մաշտոց, Երուսաղեմ, 1977 թ., էջ 23):

Այս բանաձևը արտասանելով՝ քահանան երեք անգամ երեխային ընկղմում է ջրի մեջ: Մկրտությունից հետո մկրտվողը արդեն իրավունք է ունենում մասնակցելու և հաղորդակցվելու մյուս խորհրդակատարություններին (դրոշմ, հաղորդություն, ամուսնություն և այլն):

Մկրտությունը անկրկնելի է. «Մի է Տէր, մի հաւատք և մի մկրտութիւն» (Պողոս Եփես. Դ 5):

Մկրտությունը կատարվում է եկեղեցու հյուսիսային պատի վրա կամ աջակողմյան դասում գտնվող անշարժ ու քարեղեն ավազանի մեջ, որը խորհրդանշում է եկեղեցու արգանդը՝ որտեղից պետք է ծնվեն նրա զավակները:

Քահանան զգեստավորված օրհնում է ջուրը. «Օրհնեսցի և սրբեսցի ջուրս այս՝ նշանաւ Ս. Խաչիս և Ս. Աւետարանաւս և Սրբալոյս միւռոնաւս և աւուրս շնորհիւ անուամբ Հօր և...» (Մաշտոց, էջ 20): Ապա երգելով «Ադաքելոյ աղաւնոյ» շարականը սրբագործում է օրհնված ջուրը, որի մեջ էլ մկրտում է երեխային՝ ասելով. «...ծառայս Աստուծոյ եկեալ յերախայութենէ ի մկրտութիւն մկրտի...»:

ԴՐՈՇՄ

Մկրտությունից անմիջապես հետո կատարվում է **դրոշմի սրբազան** խորհուրդը, որը մի տեսակ շարունակությունն է մկրտության և նրա լրացումը:

Դրոշմի խորհուրդով մկրտվողը լցվում է Սուրբ Հոգու շնորհներով: Դրոշմի նյութը սրբալույս մեռոնն է, իսկ բանաձևը՝ հետևյալը. «Իւղ անուշ յանուն Յիսուսի Քրիստոսի, հեղեալ, ի վերայ քո՝ կնիք երկնաւոր պարգևացն անապականութեան» (Մաշտոց, էջ 23—24):

Դրոշմի արարողության ժամանակ կնքվում է երախայի.

Ա. **Ճակատը**— Իւղ անուշ յանուն Յիսուսի Քրիստոսի հեղեալ ի վերայ քո, կնիք երկնաւոր պարգևացն անապականութեան:

Բ. **Աչսն**—Կնիքս յանուն Յիսուսի Քրիստոսի լուսաւորեսցէ զաչս քո, զի մի երբեք ննջեսցես ի մահ:

Գ. **Ականջն**—Օծումն սրբութեան եղիցի քեզ ի լսելիութիւն Աստուածային պատուիրանացն:

Դ. **Հոտոտելիսն**—Կնիք յանուն Յիսուսի Քրիստոսի, եղիցի քեզ հոտանուշութեան կենաց ի կեանս:

Ե. **Բերանն**—Եղիցի քեզ պահպանութիւն բերանոյ և դուռն ամուր շրթանց քոց:

Զ. **Ձեռսն**—...եղիցի քեզ պատճառ բարեգործութեան ամենայն առաքինի գործոց ու վարուց:

Է. **Սիրտն**—Կնիք Աստուածային սիրտ սուրբ հաստատեսցէ ի քեզ, և հոգի ուղիղ նորոգեսցէ ի փորի քում:

Ը. **Թիկունքն**—...եղիցի քեզ վահան ամրութեան, որով կարասցէս զամենայն նետս մուխս չարին շիջուցանել:

Թ. **Ոտսն**—...ուղղեսցէ զգնացս քո ի կեանս յաւիտենից զի մի սասանեսցիս:

Դրոշմի խորհուրդը ծիսակատար քահանան ավարտում է հետևյալ մաղթանքով. «Խաղաղութիւն քեզ փրկեալդ Աստուծոյ, խաղաղութիւն քեզ օծեալդ Աստուծոյ»:

Դրոշմի արգասիքը, արդյունքը Սուրբ Հոգու շնորհն է, որը անտեսանելիորեն լցվում է մկրտվողի վրա և դառնում նրա համար հավատքի վահան ընդդեմ մեղքերի և ճանապարհ արդարության և փրկության Դրոշմի արարողությունից հետո մկրտվողը հաղորդվում է Քրիստոսի Սուրբ Մարմնով և Արյամբ, որը և համարվում է նրա առաջին հաղորդությունը: Եթե մկրտվողը անչափահաս մանուկ է, ապա Քրիստոսի մարմինը քսում ենք նրա շրթունքներին (շրթնահաղորդություն), քանի որ նա ի վիճակի չէ ուտելու հաղորդության մասնիկը:

Դրոշմի խորհուրդը իմ մեջ պարունակում է նաև **Վերջին օծման** խորհուրդից բաժին, որը մեր եկեղեցու հայրերը, հետագայում, հարմար են գտել միացնելու դրոշմի խորհրդին: Դրոշմի խորհրդակատարման ժամանակ օծվում է միայն երախայի **Ճակատը, Սիրտը, Թիկունքը,** իսկ մնացած բոլոր զգայարանների օծումը կատարվել է վերջին օծման ժամանակ, բայց այսօր վերջին օծումը վերապահված է միայն հոգևորականներին և այդ իսկ պատճառով դրոշմի ժամանակ օծվում են նաև մկրտվողի զգայարանները, կանխելով այն հանգամանքը, որ մարդը կարող է վերջին օծում չունենալ:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Օրհնեալ Տէր մեր... Հայր մեր...
2. Զղջումն (խոստովանանք). Մեղայ ամենասուրբ Երրորդութեանն...

ՍԿԻՀ XIX դ.

3. Քահանայի արձակումն. Ողորմեացի քեզ մարդասերն...

4. Հայր մեր...

Ապաշխարությունը կամ խոստովանանքը այն խորհուրդն է, որով մեղավոր մարդը ճշմարիտ զղջումով ու խոստովանությամբ թողության է արժանանում Աստուծո հրամանով և քահանայի արձակումով:

Քանի որ մարդը ունի ազատ կամք և անսահմանափակ բանականություն, ապա հնարավոր է, որ նաև շեղվի արդարության ճանապարհից և մեղքեր գործի: Ահա խոստովանության նպատակն էլ հենց այդ մեղքերից ազատագրվելու ուղին և միջոցն է, որ Աստված ընծայեց մարդուն, որպեսզի նա փրկության ճանապարհ ունենա: Ու Աստված իր առաքյալներին ու նրանց միջոցով հետագա հոգևոր դասին, որոնք երկրի վրա ներկայացնում են Աստուծո խոսքը, իրավունք տվեց կապելու և արձակելու մարդկանց, նրանց գործած մեղքերի համար. «Ում որ կապեք երկրի վրա, կապված պիտի մնա երկնքի մեջ, և ում որ արձակեք (մեղքերից) երկրի վրա, արձակված պիտի լինի երկնքում» (Մատթ. ԺԸ 18): Մեկ ուրիշ հաստատում. «Փչեց նրանց վրա և ասաց, առեք Սուրբ Հոգին: Եթե մեկին ներեք իր մեղքերը, թող ներված լինի, եթե մեկին կապեք իր մեղքերի համար, թող կապված մնա» (Հովհ. Ի 22—23):

Պայման է, որ ապաշխարողը գիտակցի, որպեսզի խոստովանությունը կատարյալ լինի, անհրաժեշտ է.

Ա. Գիտակցել գործած մեղքը և զղջալ:

Բ. Բարձրաձայն խոստովանել այն չկրկնելու պայմանով:

Գ. Գիտակցել, որ մեղքի փրկության համար եղած փրկագինը Քրիստոսի մարմինն ու արյունն է և Աստուծո խաչափայտը, որի վրա ավանդելով իր հոգին՝ Քրիստոս մեզ ազատեց մեղքի իշխանությունից:

Եվ յուրաքանչյուր հավատացյալ Սուրբ հաղորդության խորհրդին մոտենալու է այն պայծառ գիտակցությամբ, որ ինքը փրկվում է Աստուծո ողորմությամբ և նրա արյան գնով: Եվ միայն այդ ճանապարհն է՝ Մեղքի գիտակցման ճանապարհը, որով մարդ նորից միանում է Աստծուն. «Ոչ եկի կոչել զարդարսն այլ՝ զմեղաւորս» (Մատթ. Թ 13):

Պողոս առաքյալը ապաշխարության խորհրդի մասին գրում է հետևյալը. «Այլ ամենայն ինչ յԱստուծոյ, որ հաշտեցոյցն զքեզ ընդ իւր ի ձեռն Քրիստոսի, ևետ մեզ զպաշտօնն հաշտութեան... Եւ քանզի Աստուած էր Քրիստոսիւ զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, և չհամարել նոցա զմեղս իւրեանց, և եդ ի մեզ զբանն հաշտութեան: Արդ վասն Քրիստոսի պատգամաւորեմք, որպես և Աստուծոյ բարեխօսութեամբ մեք աղաչեմք վասն Քրիստոսի հաշտեցարուք ընդ Աստուծոյ» (Կորնթ. Ե 18—20):

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ Ս. ՊԱՏԱՐԱԳ

«Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ կեցցէ ի յաւիտեան. և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի» (Հովհ. 15—52):

Հաղորդությունը այն սրբազան խորհուրդն է, որի ընթացքում հացը և գինին փոխակերպվում են և սրբագործվելուց հետո խորհրդանշում Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Այս խորհուրդը հաստատեց Քրիստոս վերջին ընթրիքի ժամանակ. վերցրեց հացը (բաղարջ), օրհնեց, կտրեց. «Առէք կե-

բայք, այս է մարմին իմ», հետո վերցնելով բաժակը՝ խմեց և տվեց իր աշակերտներին ասելով. «Արբէք ի դմանէ ամենեքեան, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց» (Մատթ. ԻԶ 28):

Սուրբ պատարագի այս սրբազան արարողությունը հետապնդում է հետևյալ նպատակները.

1. Վերջին ընթրիքի անմոռանալի հիշատակը:

2. Հիսուս Քրիստոսի փրկարար զոհագործությունը:

3. Հավատացյալի հոգևոր ու երջանիկ միացումը Քրիստոսի հետ՝ հաղորդության միջոցով:

Արդեն պատարագի սահմանումն էլ գալիս է մեզ բացատրելու այսպես. «Պատարագն է խորհուրդ հաղորդութեան մարմնոյ և արեան: Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որ ի ձեռն քահանային սրբագործեալ մատուցանի Հօր Աստուծոյ յանդատապարտութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց մերոց»:

Սուրբ հաղորդության խորհուրդը և նրա նպատակը մեզ ամբողջական ձևով բացատրում է Հովհաննես ավետարանիչը, որը ապառիչ ձևով սահմանել է այն Հիսուսի անունից հայտարարելով. «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ ունի զկեանս յաւիտենականս, և ես յարուցից զնա յաւուրն յետնում: Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է: Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ յիս բնակեսցէ, և ես ի նմա» (Հովհ. Զ 55—58):

Սուրբ պատարագի ընթացքում, սրբագործման պահին, հացը և գինին խորհրդավոր, անճառելի կերպով փոխակերպվում են Քրիստոսի մարմնին և արյանը: Մեր Եկեղեցու վարդապետները ճշտում են, որ հացը և գինին «կը փոխուին» (Անձևացի, էջ 40, Լամբրոնացի, էջ 112), «կը փոխարկուին» (Լամբրոնացի, էջ 108, Տաթևացի, էջ 597) Քրիստոսի մարմնին և արյանը: Անշուշտ այս հանգամանքը «Խորհուրդ խորին» է, անքննելի ու անբացատրելի, Սուրբ Հոգու ներգործությամբ հացի ու գինու փոխակերպումը Քրիստոսի մարմնին և արյանը:

Գրիգոր Տաթևացին այս երևույթը բացատրում է հետևյալ կերպ. «Որպէս հացն նոյնն է ըստ ձևի, այլ՝ այլ գոյացութիւն է եղեալ մարմին Քրիստոսի: Նոյնպէս վերա երևոյթ կերպարանքն նոյն է ըստ ձևին, այլ բնութիւն միաւորեալ է ընդ Բանին Աստուծոյ և եղեալ Աստուած» (Գրիգոր Տաթևացի, էջ 597—598):

Այսինքն արտաքնապես հացը և գինին նյութական փոփոխություն չեն կրում (ինչպես մեկնաբանում է Հռոմեական Եկեղեցին), այլ ստանում է մի նոր զորություն՝ Սուրբ Հոգու ազդեցությամբ, և խորհրդավորաբար ներկայացնում Քրիստոսի մարմինն ու արյունը:

Հովհան Մանդակունի կաթողիկոսը այս փոխակերպումը բացատրում է հետևյալ կերպ: «Այլ մի իբրև ի լոկ հաց հայիցիս, և մի իբրև զգինի համարիցիս և տեսանիցիս, զի ոչ տեսանելի է անհաւորութիւն Սուրբ խորհրդոյն, այլ իմանալի զօրութիւնս...: Եվ մեք ճշմարիտ հաւատով զՔրիստոս իմանամք ի վերայ սեղանոյն, ի նա մերձենամք, զնա տեսանեմք, զնա շոշափեմք, զնա համբուրեմք, զնա առնումք ի ներքոյ, և ընդունիմք և լինիմք մարմին և անդամք և որդիք Աստուծոյ...» (Հովհան Մանդակունի, ճառք, էջ 168):

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Սուրբ պատարագը բաղկացած է հինգ գլխավոր բաժիններից, որոնք միասին կազմում են մի ամբողջություն, բայց ըստ իմաստի և բովանդակության կարելի է նաև առանձնացնել.

Ա. Պատրաստություն.

Բ. Մուտք կամ Երախայից պատարագ.

Գ. Բուն պատարագ, հավատացելոց կամ սրբեցելոց պատարագ.

Դ. Օրհնություն կամ արձակում.

Ե. Վախճան:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ճաշու ժամերգության ավարտին պատարագիչ քահանան, որը պատարագի նախօրյակին ծոմ է պահել, անարատ մնացել ֆիզիկապես, աղոթքներով (սաղմոսներ, Նարեկացու աղոթքները), նախապատրաստվել սրբազան խորհրդին, պետք է խոստովանի իր մեղքերը մաքուր սրտով ու անկեղծ հավատքով, սարկավագների առաջնորդությամբ գնում է զգեստավորվելու, որպեսզի «Քահանայական փառոք» մտնի «ի պաշտօն սրբութեանց»:

(Յուրաքանչյուր պատարագիչ, պայման է, որ նախապես պատրաստի նշխար, սաղմոսերգուի երեք «Ողորմեա»-ները կարդալով):

Քահանայի զգեստավորման ժամանակ դպիրները երգում են Խաչատուր վրդ. Տարոնցու «Խորհուրդ խորին» մեղեդին: Զգեստավորված քահանան սարկավագի խնկարկությամբ, մոմակալների թափորով գալիս է ատյան՝ Ս. խորանի առջև, լվանում ձեռքերը. «Լուացից սրբութեամբ զձեռն իմ և շուրջ եղև սեղանով քո Տէր»: Եվ կատարում է հրապարակային խոստովանություն, որից հետո նույն թափորով բարձրանում է Ս. Խորան (բեմ): Փակվում է վարագույրը, դպիրները եղանակում են երգ «Յաւուր պատշաճի», իսկ պատարագիչը ընթերցում է Նարեկից հատվածներ (Բան ԼԳ—ԼԴ և Ե գլուխները):

Հավարտ աղոթքի վերաբերում կատարող կամ սպասարկող սարկավագը մատուցում է պատարագիչ քահանային պատարագի ընծաները (նշխարք և գինի): Պատարագիչը Խորհրդատեղից կարդալով մասնավոր աղոթքներ, նախ խաչանիշ օրհնում է նշխարը, այն դնում մաղզմայի վրա, ապա նույն ձևով օրհնում է գինին և խաչաձև լցնում սկիհի մեջ: Ավարտելուց հետո սքողում է ծածկոցով և երեք անգամ Տեառնագրելով կարդում. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»: Պատարագիչ քահանան ավարտելով ընծաների պատրաստությունը խնկարկում է, իսկ սարկավագը վերցնելով այն դնում է հյուսիսային պատի մեջ գտնվող խորհրդարանում, որը լուսավորված է լինում վառվող զույգ մոմերով:

Հացի և գինու տեառնագրումից հետո բացվում է վարագույրը, և պատարագիչը բուրվառը և խաչը ձեռքին խորանի հյուսիսային աստիճաններից իջնում է նախ ատյան, և ապա խնկարկելով ժողովրդին՝ հարավային կոմից բարձրանում է վեր: Այս մասը կոչվում է «Աշխարհգալոց» և խորհրդանշում է Քրիստոսի երեսուներեք տարիների աշխարհային կյանքը:

Այս թափորին ուղեկցում են սարկավագներ, դպիրներ՝ երկշարք մոմակալներով, խաչվառով և երկու քշոցակիրներ «Բարեխօսութեամբ» շարականի երգեցողությամբ:

ԵՐԱԽԱՅԻՑ ՊԱՏԱՐԱԳ

Պատարագիչ քահանան երբ բարձրանում է ձախակողմյան դասի աստիճաններից խորան և այն պահից, երբ սարկավագը եղանակում է «Օրհնեա Տէր», իսկ պատարագիչը՝ «Օրհնեալ թագաւորութիւն Հօր և Որդւոյ...», սկըսվում է պատարագի երկրորդ բաժինը, որը կոչվում է «Երախայից պատարագ»:

Այս բաժնի բուն նպատակը հավատացյալի մտքի լուսավորությունն է ու նրա նախապատրաստությունը սրբազան խորհրդին, որը իրավորձվում է աղոթքներով, ընթերցվածքներով Ս. Գրքից, հավատո հանգանակի արտասանությամբ:

Վերաբերում կատարող սարկավագը «Պոռսխումէ» երգելով քահանայից վերցնում է Ավետարանը և Երեքսրբյան երգեցողության ընթացքում՝ «Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ...», մոմակիրների և քշոցակիրների ուղեկցությամբ, շրջանցելով խորանը ձախակողմյան դասից, այն մատուցում է համբուրելու ատյանում գտնվող հոգևորականին, և ճիշտ այդ պահին քահանան, շրջվելով, վերևից օրհնում է ժողովրդին և խաչակնքում նաև Ճաշոց գիրքը ընթերցելու պատրաստ հոգևորականին:

Երեքսրբյան երգաբանությանը հաջորդում է սարկավագաց քարոզը՝ «Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ», որին դպիրները պատասխանում են «Տէր ողորմեա»-ներով:

Այս քարոզից հետո քահանան ի ձայն կարդում է «Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով...» աղոթքը: «Յետ այսորիկ պատարագիչն, եթէ իցէ եպիսկոպոս և առաջնորդ վիճակի, երկրպագեսցէ սեղանոյն և եկեալ բազմեսցի յաթոռն: Դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն ընթերցցին զմարգարէական և զառաքելական զգիրս: Եւ ապա Ալելուիա սաղմոս ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն»:

Որին հաջորդում է ավետարանի ընթերցումը հավուր պատշաճի: Հավատո հանգանակի արտասանությունից հետո կարդացվում է սարկավագի կողմից «Իսկ որք ասեն...», իսկ քահանան կարդում է «Իսկ մեք փառաւորեսցուք», որից հետո սարկավագները ձայնում են «Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք...» քարոզը, որի ընթացքում քահանան ծածուկ կարդում է «Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս...» աղոթքը:

Երախայից պատարագը շարունակվում է մինչև այն պահը, երբ սարկավագը երգում է «Մի ոք յերախայից, մի ոք ի թերահաւատից և մի ոք ի յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս»:

Եվ ճիշտ այստեղ, երբ չմկրտված ու սուրբ խորհրդին անպատրաստ ներկաները դուրս են գալիս գավիթ, ու փակվում են դռները, սկսվում է հաջորդ բաժինը, որը կոչվում է Բուն պատարագ կամ հավատացելոց պատարագ:

ՀԱՎԱՏԱՑԵԼՈՑ ԿԱՄ ՍՐԲԵՑԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳ

Դպիրների «սրբասացություն» երգելու ժամանակահատվածում սարկավագը կատարում է վերաբերում՝ այսինքն սկիհը վերցնելով հյուսիսային

պատի վրա գտնվող խորհրդարանից, այն բերում է՝ շրջանցելով Սուրբ սեղանը, և մինչ նա քայլում է, քահանան ծածուկ կարդում է աղոթք՝ «ոչ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութեամբ՝ մատչիլ ի սեղան քո...»: Երբ վերաբերման թափորը հասնում է սուրբ սեղանի առջև, պատարագիչը խնկարկում է սրբությանը, իսկ սարկավագը այդ պահին ձայնում է «Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձին դրունք յաւիտենից և մտցէ թագաւոր փառաց», պատարագիչը նրան հարցնում է՝ «Ո՞վ է սա թագաւոր փառաց. Տէր հզօր զօրութեամբ իւրով, Տէր կարող ի պատերազմի»: Այս երկխոսությունը կրկնվում է երկու անգամ և ապա սարկավագը սուրբ Սկիհը քահանային է հանձնում՝ ասելով. «Սա ինքն է թագաւոր փառաց»: Պատարագիչ քահանան այն վերցնելով, դառնում է դեմքով դեպի ժողովուրդը և հայտարարում. «Օրհնեալ, եկեալ անուամբ Տեառն»: Ապա վերադառնալով Սկիհը դնում է սուրբ սեանի վրա:

Պատարագիչ քահանան, որը այդ պահից արդեն դարձել էր սպասավորը սուրբ խորհրդի, այդ պահին նախ խնկարկում է սուրբ Սկիհին, ապա լվանում է ձեռքերը, որպեսզի մաքուր ձեռքերով ու մաքուր սրտով սպասավորի Սրբությանը: Սարկավագը ժողովրդին կոչ է անում հավատքով ու սրբությամբ աղոթեն Աստծու սուրբ սեղանի առջև. «Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, ահիւ, մի խղճիւ և գայթակղութեամբ...»:

Պատարագիչ քահանան կարդում է «Տէր Աստուած զօրութեան և արարիչ ամենայն լինելութեանց...» աղոթքը և կիսով չափ բացելով Սկիհը, որպեսզի երևա նշխարը, խաղաղություն է տալիս ժողովրդին: Սարկավագը խաղաղությունից հետո «Առաջի քո Տէր»-ի ժամանակ մոտենում, համբուրում է սուրբ սեղանը, ապա պատարագչի աջը, ստանում «Ողջոյն» և ապա եղանակում. «Ողջոյն տուք միմեանց...», և երբ դպիրները երգում են «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ...», իջնում է ատյան և ողջույնը փոխանցում ավագագույն հոգևորականին և կրկին սեղան բարձրանալով՝ խնկարկում է ժողովրդին քահանայի խաչանիշ օրհնությամբ:

Պատարագիչ քահանան «Շնորհք, սէր և աստուածային սրբարար զօրութիւն...» կարդալուց հետո գոհություն է հայտնում Աստծուն և ծածուկ աղոթքով օրհնում ու փառաբանում նրան, որ մարդուն արժանի դարձրեց փրկագործության սուրբ խորհրդին, երախտագիտություն է հայտնում առ Աստված որ. «յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղեն պարս...»: Եվ ապա քահանան բարձրաձայն եղանակում է «Եւ ընդ Սերովբէսն և ընդ Քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս...», որին հաջորդում է դպիրների երգը. «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց...»: Այդ պահին քահանան ևս ծածուկ կարդում է «Սուրբ, Սուրբ, Սուրբ ես ճշմարտապէս...» աղոթքը և ապա երկրպագելով սուրբ սեղանին, բացում է սկիհի ծածկոցը, այն ետ տանելով, վերցնում է նշխարը, օրհնում, համբուրում, կտրում խաչաձև և չորս անկյունները և վեր բարձրացնելով կարդում է Հիսուսի պատվիրանը վերնատան մեջ. «Առէք, կերէք այս է մարմին իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»: Քահանան նշխարը դնում է նորից մաղզմայի վրա և մաղզման դընում սուրբ սեղանին, ապա վերցնելով սկիհը ի տես ժողովրդյան օրհնում է, համբուրում և վեր բարձրացնելով կարդում. «Արբէք ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»:

Դպիրները երգում են «Ամէն Հայր երկնաւոր», իսկ պատարագիչ քահանան մաղզման դնելով սկիհի վրա, աքողում է այն, և ապա երկու ձեռքով բռնում է սկիհի պատվանդանը և ծածուկ աղոթում «...և զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիք քո միածին...»: Եվ ապա սկիհը մի քիչ վեր բարձրացնելով պատարագիչ քահանան ասում է «և զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ յամենայնի և յաղագս ամենեցուն»:

Պատարագիչը ապա խաղաղություն է տալիս ժողովրդին և դառնալով դեպի սուրբ սեղան կարդում է աղաչական ծածուկ աղոթքը, որպեսզի Սուրբ Հոգու ազդեցությամբ «ճշմարտապէս» և «ստուգապէս» հացը և գինին փոխակերպվեն Քրիստոսի մարմնին և արյանը, և երբ դպրաց դասը երգում է «Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի մեզ...», քահանան ծածուկ աղոթքով, բուրվառակրի խնկարկությամբ սրբագործում է հացը և գինին՝ երիցս օրհնելով նախ նշխարը:

«Որով քհացս օրհնեալ, մարմին ճշմարտապէս արասցէս Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի»:

Ապա երիցս օրհնում է գինին ասելով.

«և զբաժակս օրհնեալ, արիւն ստուգապէս արասցէս...»:

Եվ ապա հացը և գինին միասին երիցս օրհնելով կարդում է.

«Որով զհացս և զգինին օրհնեալ, մարմին և արիւն ճշմարտապէս արասցէս Տեառն մերոյ և փրկչին Յիսուս Քրիստոսի»:

Երրորդ անգամ հացը և գինին միասին օրհնելուց հետո քահանան կարդում է Փոխարկելով Հոգուվդ քով սրբով»:

Սրբագործելով հացը և գինին՝ քահանան բարձրաձայն աղոթում է. «Որպեսզի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանդուգնապարտութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»: Իսկ դպիրները եղանակում են «Հոգի Աստուծոյ որ փառակցի...» երգը:

Սրբագործման բաժինը ավարտվելուց հետո հայցվում է սրբոց բարեխոսությունը և հիշատակվում է «կենդանեաց և մեռելոց» անունները. և երբ սարկավագները երգում են օրինակ՝ «Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց...», դպիրները պատասխանում են «Յիշեա Տէր և ողորմեա» և այսպես հաջորդաբար, նույն պահին պատարագիչը ծածուկ, առանձնակի աղոթում է առ Աստված, որ նա օրհնի սուրբ և կաթողիկե եկեղեցին, օրհնի եպիսկոպոսաց դասը, Կաթողիկոսին, հոգևոր պաշտոնեությանը, պատարագ մատուցողին և «... զուխտաւորս և պտղաբերիչս եկեղեցւոյ...:

Տէրունական աղոթքից հետո քահանան երկրպագելով սկիհի աջակողմը՝ ասում է «Քրիստոսի», երկրգապելով ձախակողմը՝ «Յիսուսի» և երկրպագելով սկիհի կենտրոնը, գագաթը «Տէրամբ մերով...» աղոթքը, որին սարկավագը ձայնակցում է «Պռոսխումէ» երգելով, իսկ քահանան բացելով սկիհը երկու ձեռքերի մատներով (ցուցամատ և բթամատ) բարձրացնում է սուրբ Մարմինը ի տես ժողովրդյան և ասում «Ի սրբութիւն սրբոց»: Դպիրները երգում են «Միայն սուրբ, միայն Տէր...», իսկ քահանան բարձրաձայն երգում է «Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ...» շարքը, որին դպիրները պատասխանում են «Ամէն»-ով:

Երբ պատարագիչ քահանան կարդում է «Նայեաց Տէր Յիսուս Քրիստոս յերկնից ի սրբութենէ քումմէ...», ահա այդ աղոթքի ընթացքում է, որ սուրբ Մարմինը ամբողջությամբ ընկղմում է սուրբ Արյան մեջ և թրջում, ապա

դառնալով դեպի ժողովուրդը, ձեռքին ունենալով սկիհը և նշխարը սկիհի մեջ, որը բռնած է լինում մատներով, արտասանում է «Ի սուրբ, ի սուրբ պատուական մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեսցուք արբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում...»: Ապա փակվում է վարագույրը և երբ դպիրները երգում են «Տէր ողորմեա», քահանան ծածուկ կարդում է աղոթք և այդ ընթացքում «Լրումն Հոգւոյն Սրբոյ» ասելով Սուրբ Մարմինը չորս մասի բաժանելով՝ կարդում «Հայր սուրբ, որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քո...» աղոթքը: Ապա ընթերցում է Հովհան Ոսկեբերանի աղոթքը, որից հետո ճաշակելով սուրբ Մարմինը՝ արտասանում «Հաւատով ճաշակեմ զսուրբ և զկենդանարար և զփրկագործ մարմինս քո...»: Եվ վերցնելով բաժակը ըմպում է Սուրբ Արյունը և ասում. «Հաւատով ըմպեմ զարբարար և զմաքրիչ արիւնս քո...»:

Եվ քահանան հաղորդվելուց հետո նախապատրաստվում է հաղորդություն տալու այն արժանավորներին, որոնք խոստովանվել են և նախապատրաստվել ընդունելու Սուրբ Հաղորդություն: Ապա «Կեցո Տէր զժողովուրդս քո և օրհնեա զժառանգութիւնս քո...» աղոթքից հետո դառնում է դեպի սուրբ սեղանն ու փակվում է վարագույրը: Պատարագիչ քահանան ճաշակում է սկիհի մեջ մնացած արբությունը, կամ այն դնում մաւնավոր մասնատուփի մեջ և լվանում մաղզման, սկիհը, իր ձեռքերը ու սկիհը լավ չորացնելուց հետո սարկավագը այն դնում է խորհրդարանում:

Այն ամենից հետո պատարագիչ քահանան կարդում է գոհաբանական աղոթք. «Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցէր մեզ...», որով և ավարտվում է պատարագի երրորդ և ամենաէական բաժինը, որ էր հավատացելոց պատարագ կամ բուն պատարագ:

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՐՁԱԿՈՒՄ

Պատարագի հինգ բաժանումներից վերջին երկուսը թե՛ իմաստով և թե՛ նպատակով նույնն են, այդ իսկ պատճառով հարմար նկատեցինք միացնել ու ներկայացնել նույն խորագրի տակ:

Օրհնությունը պատարագի վերջին բաժինն է, որի նպատակն է փառաբանություն և գոհություն առ Աստված, որ մեզ արժանի արեց Սուրբ Հաղորդությամբ մաքրվելու և Աստծուն վերամիանալու համար:

Պատարագիչ քահանան նորից դնում է թագը, հագնում հողաթափերը, իսկ եթե եպիսկոպոս է՝ ապա խույրը, պանակեն, եմիփորոնը, ատրախուրակները, հողաթափերն ու մատանին, որոնք հանվել էին դեռևս վերաբերումից առաջ: Ապա երգում է Սուրբ խորանից կատարվող վերջին մաղթանքների շարքը. «Որ օրհնես զայնոսիկ ոյք օրհնեն զքեզ Տէր և սուրբ առնես զյուսացեալս ի քեզ»: Համբուրելով Սուրբ Սեղանը, իրեն ուղեկցող թափորի հետ, վերցնելով Ավետարանը՝ իջնում է ատյան, ուր և արտասանում է «Եղիցի, եղիցի և եղիցի կատարումն օրհնաց և մարգարեից՝ դու ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրական տնօրէնութիւնս քո, լից և զմեզ հոգւով քով սրբով»:

Եթե հոգեհանգիստ կա, ապա ճիշտ այս պահին կատարվում է հոգեհանգիստ, իսկ եթե չկա, ապա կարդացվում է Ավետարան՝ «Ի հօրէ լուսոյ: Ի սկզբանէ էր բանն...», որին հաջորդում է սարկավագի քարոզը՝ «Սուրբ խա-

չիւս...», քահանան արտասանում է «Պահպանիչ», «Հայր մեր» և «Օրհնեալ եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն, երթայք ի խաղաղութիւն... Ամէն»: Հավարտ պատարագի ժողովուրդը համբուրում է պատարագչի ձեռքի Ավետարանը: Որից հետո պատարագիչը գնում է ավանդատուն զգեստները հանելու:

ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԿԱՐԳ ՔԱՀԱՆԱՅՈՒԹՅԱՆ

Քահանայությունը կամ ձեռնադրությունը Հայ Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է, որով հոգևոր իշխանություն և քահանայական շնորհ ու աստիճան է տրվում նվիրյալին, որպեսզի ձեռնադրյալը իրավասություն ունենա կատարելու եկեղեցու խորհուրդներն ու պաշտամունքը: Ձեռնադրությունը կատարվում է եկեղեցում, եպիսկոպոսի կողմից: Արարողությունը ձեռնադրություն է կոչվում, որովհետև խորհրդակատարման պահին եպիսկոպոսը ձեռքը դնում է ընծայալի գլխին և աղոթքով նրան իշխանություն տալիս քահանայագործելու:

Այս խորհուրդը հաստատել է Յիսուս իր առաքյալներին իշխանություն տալով, իսկ առաքյալները հաջորդաբար ձեռնադրել են եպիսկոպոսներ, երեցներ ու սարկավագներ, ու այս հաջորդական կարգը հասել է մինչև մեր օրերը: Ձեռնադրությունից զատ կատարվում է նաև օծման արարողություն, որով ընծայալը լցվում է Սուրբ Հոգու շնորհներով:

Քահանայությունը ունի յոթ աստիճաններ.

ա. դռնապանություն.

բ. ընթերցողություն.

գ. երդմնեցուցչություն.

դ. ջահընկալություն.

ե. կիսասարկավագություն.

զ. սարկավագություն.

է. քահանայություն:

Որևէ ընծայացու քահանա ձեռնադրվելու համար պետք է լրացնի հետևյալ պայմանները.

1—Աստվածային կոչում—Պետք է իր մեջ զգա աստվածային կոչում իր նոր ասպարեզի համար (Բ Կորն. Ժ 18, Եբր. Ե 4):

2—Սուրբ Գրքի հմտություն—Պետք է անթերի և ամբողջապես իմանա Հին և Նոր կտակարանները և սուրբ գրական գործերին ծանոթ ու հմուտ լինի (Ա Տիմ. Դ 13—16, Բ Տիմ. Դ 1—2):

3—Քարոզելու, խոսելու, կազմակերպելու և առաջնորդելու կարողություն ունենա (Բ Կորն. Զ 4, Ա Թես. Բ գլուխը, Ա Տիմ. Գ 2):

4—Եկեղեցու և ժողովրդի կողմից բարի վկայություն և միակամ ընտրություն ունենա (Գործք Զ 2—3):

5—Հավատքի քննություն (հավատք, գիտություն, վարք ու բարք, սրբություն, անարատություն և առաքինություն (Ա Տիմ. Գ 9—10):

6—Պետք է ձեռնադրվի առաջնորդ եպիսկոպոսի կողմից (Ա Տիմ. Դ 14—Ե 22):

7—Հավատքի ուղղափառություն (Գործք ԺԴ 22, Եբր. Զ 2):

8—Մարմնական կատարելություն (ֆիզիկական թերություններ չունենա) (Ա Տիմ. Գ 4—12, Ղևտացվոց ԻԱ 17—23):

Քահանայացուն պետք է արդեն, նախքան ձեռնադրվելը, ամուսնացած լինի և միայն մեկ անգամ ամուսնանալու իրավունք ունի (Ա Տիմ. Գ 12): (Բայց այս կանոնը կարելի է նաև անխախտ չհամարել, որովհետև որոշ պարագաներում թուլատրվում է երկրորդ ամուսնություն):

Այս բոլոր պայմանները, բացի վերջինից, քանի որ կուսակրոնները ամուսնանալու իրավունք չունեն, պայման է, որ լրացնի յուրաքանչյուր ընծայալ:

Մենք հետագա դասընթացի ժամանակ կծանոթանանք Հայ Եկեղեցու նվիրապետական կարգին և յուրաքանչյուրի պարտականություններին ու իրավունքներին, «Հայ Եկեղեցու նվիրապետությունը» բաժնում:

ՊՍԱԿ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ
Ըստ Մաշտոցի Կանոն Կուսի Պսակին

Պսակը Եկեղեցու յոթ խորհուրդներից մեկն է, որովհետև Աստվածային հաստատում ունի և Աստված է առաջին ընտանիքի ստեղծողն ու հիմնադրողը. «...վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ և եղիցին երկոքեան ի մարմին մի» (Ծննդոց Բ 23—24) և Աստված սրբագործեց ընտանիքն ու այն նպատակամղեց երկրի աճեցմանն ու բարգավաճմանը. «Աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր և տիրեցէք դմա» (Ծննդոց Ա 28):

Հիսուս հաստատեց սուրբ ամուսնության խորհուրդը հրամայելով. «Զոր Աստուած զուգեաց մարդ մի մեկնեսցէ» (Մատթ. ԺԹ 6):

Պսակի խորհուրդը կայանում է նրանում, որ երկու տարբեր անձնավորություններ սուրբ եկեղեցում խոստմամբ և դաշինքով, եկեղեցու պաշտոնյայի աղոթքներով միավորվում և կազմում են մի էություն, մի ընտանիք.

Ամուսնությունը որպեսզի դառնա օրինավոր և վավերական, ապա ամուսնացողները պետք է լրացնեն հետևյալ պայմանները՝ (այս պայմանները շատ հրամայական էին, քանզի ամուսնությունը անլուծելի և քիչ բացառությամբ կրկնելի, խորհուրդ է):

Պայմաններն են.

Ա. Երկկողմանի սեր և հավանություն, ազատ կամքով և ոչ բռնությամբ միավորություն:

Բ. Չափահասություն, խելահասություն: Փեսան և հարսը պետք է լինեն չափահաս (18—20 տարեկան), գիտակցեն ամուսնության խորհուրդն ու նշանակությունը:

Գ. Ֆիզիկապես պետք է ունենան կատարյալ առողջություն, պետք է ունենան ամուսնական կյանքի ունակություն և արգասավորություն: Քանի որ ամուսնության նպատակը որդեծնությունն է, ուստի առողջությունը անհրաժեշտ է գալիք սերնդի համար:

Դ. Հարսն ու փեսան մերձավոր ազգականներ չպետք է լինեն: Մեր նախնիք պահպանել են մինչև յոթը պորտ հեռավորությամբ արենակցական կապը, բայց հետագայում եկեղեցու հայրերի թույլտվությամբ կարելի է ամուսնությունը վավերական համարել մինչև հինգերորդ պորտը, բայց ոչ ավելի հարազատ: Համարյունությունը պատճառ է մոտ ազգականների ամուսնությունից ծնված երեխաների թերի ու տհաս լինելուն:

Ե. Պասկը պետք է կատարվի քահանայի, կամ եկեղեցու իրավասու և օրինավոր պաշտոնյայի կողմից:

Պասկը անլուծելի է, այն լուծելու իրավունքը վերապահված է միայն առաջնորդներին և եպիսկոպոսներին և այն էլ հետևյալ բացառիկ պարագաներում.

1—Ամուսնացյալ զույգից մեկի մահվան պարագային.

2—Պոռնկության և շնության պարագային.

3—Յոթ տարի անհայտ ու անլուր բացակայության պարագային.

4—Անբուժելի հիվանդությամբ կամ խելացնորությամբ տառապելու պարագային (նախկինում նաև դավանափոխության համար):

Ահա միայն այս դեպքերում էր, որ Եկեղեցին արտոնում էր ամուսնալուծություն:

Ըստ Եկեղեցու կանոնադրության **Պահոց** և **Տերունի** օրերին արգելվում է պսակադրություն: Բայց այսօր ժամանակի հրամայական պահանջների ստիպողության տակ բացառություններ են արվում, բայց ցանկալի է պահել մեր Եկեղեցու ավանդությունները և հնարավորին չափ խուսափել խախտումներից:

ԿԱՐԳ ՀԻՎԱՆԴԱՑ ԿԱՄ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄ

Հայ Եկեղեցու վերջին, չորրորդ խորհուրդն է կարգ հիվանդացը, որը հաստատվել է հիվանդներին մեղքերից քավելու, հոգեպես զորացնելու, տագնապն ու ահը ցրելու և եթե մահամերձի վախճանը չի հասել, ապա նրան առողջություն մաղթելու և քաջալերելու համար:

Այս խորհուրդը ևս հաստատել է Քրիստոս, նա իր աշակերտներին հրամայեց. «Զհիւանդս բժշկեցէք, զդևս հանեցէք, զբորոտս սրբեցէք» (Մատթ. Ժ 8): Եվ հավելումն սրա Հակոբոս առաքյալը պատվիրում է հավատացյալներին. «Եթե ձեզանից մեկը հիվանդանա, թող կանչեն եկեղեցու երեցներին, և նրանք թող աղոթեն նրա վրա, և Տիրոջ անունով թող օծեն նրան: Եվ հավատքով եղած աղոթքը պիտի փրկի հիվանդին և Տերը ոտքի պիտի հանի նրան, և եթե մեղք էլ է գործել, ապա պիտի ներվի նրան» (Հակ. Ե 15—16):

Սովորական, առօրյա գործածական Մաշտոցների մեջ չկա օծման բաժին, այն վերապահված է միայն հոգևոր աստիճան ունեցող եկեղեցականին, երբ եկեղեցում, պատարագի ժամանակ, ձեռնադրության բանաձևի նման. «Օծցի և սրբեսցի ճակատս...» ձևն է գործածվում: Իսկ աշխարհականների համար կարդացվում են աղոթքներ, ավետարան, քարոզներ և խոստովանեցնելով նրանց՝ հաղորդություն է տրվում:

Լատին Եկեղեցին ունի նաև աշխարհականների համար օծման արարողություն, որը կատարում են ձեթով:

Եթե հիվանդը «Կարգ հիվանդաց» արարողությունից հետո առողջանա, իսկ այնուհետև նորից հիվանդանա, պետք է կրկին կատարել այս խորհուրդը, որով՝ վերջին օծումը կրկնելի խորհուրդ է և նրա նպատակն է նաև հիվանդի բժշկությունը և մեղքերի թողությունը, իսկ եթե հիվանդը մահանա, ապա դա կլինի նրա վերջնական նախապատրաստություն ու մաքրություն հավիտենական կյանքի համար:

Ինչպես արդեն ծանոթացանք մկրտության և հատկապես դրոշմի խոր-

հրդի ժամանակ, վերջին օծման արարողության մի մասը միացվել է դրոշմի խորհրդի հետ: Պատճառներից մեկն էլ այն է, որ այսօր պայման չէ հիվանդի անպայմանաբար օծումը, բայց պայման է նրանց մեղաց թողությունն ու հաղորդություն տալը:

Վերջին օծման արարողությունը «Մաշտոցի» մեջ նշվում է հետևյալ կերպ.

Ա. Կանոն հաղորդ տալոյ.

Բ. Կանոն գիշերային ժամու աղօթից, որ կատարի ի վերայ ծանր հիւանդաց, ի բժշկութիւն ցաւոց և ի քաւութիւն յանցանաց:

Առաջին պարագային. «Առնու քահանայն հաղորդութիւնն, զխաչն և զաւետարանն և զշուրջառն և երթայ առ հիւանդն. Խոստովանեցուցանէ զնա զգուշութեամբ և ասէ զաղոթս զայս...»:

Իսկ երկրորդը բավական երկար է ու իր մեջ պարունակում է սաղմոսներ, քարոզներ, շարականներ, ավետարաններ, որ կատարվում է մահամերձ հիվանդների համար (Տես «Մաշտոց», էջ 76—134):

ԱՐՏԱԿ ԱՎ. ՔՀՆ. ՍԻՄՈՆՅԱՆ